

ԹԻՎ 24 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

«31» հունվարի 2025թ.

ք. Վանաձոր

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 4-Ա

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԱԾ «ԱՊՐԵԼՈՒ ԵՐԿԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ, ԻՆՔՆԱԲԱՑԱՐԿ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ (ՄԱՆԴԱՏԻՑ ՀՐԱԺԱՐՎԱԾ) ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳՐԱՆՑՈՒՄՆ ՌԻԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 141-րդ հոդվածի 9-րդ մասով և հիմք ընդունելով 2022 թվականի սեպտեմբերի 25-ին կայացած Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու ընտրություններին մասնակցած «Ապրելու երկիր» կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված ավագանու անդամի թեկնածու Սուրեն Վոլոդյայի Մաթոսյանի կողմից թիվ 24 ընտրատարածքային ընտրական հանձնաժողով ներկայացված ինքնաբացարկի մասին դիմումը, որը վավերացված է նոտարական կարգով՝ թիվ 24 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Ուժը կորցրած ճանաչել «Ապրելու երկիր» կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված ավագանու անդամի թեկնածու Սուրեն Վոլոդյայի Մաթոսյանի գրանցումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակելու պահից:

**ԹԻՎ 24 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**



Վ. ՎԱՆՅԱՆ